# «Հայաստանի Հանրապետությունում տոհմաբուծարանների հինման ծրագիրը հաստատելու մասին» արձանագրային որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ԱՐՁԱՆԱԳՐԱՅԻՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՏՈՀՄԱԲՈՒԾԱՐԱՆՆԵՐԻ**

**ՀԻՄՆՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետությունում բուծվող տավարի և ոչխարի տոհմային արժեքի բարձրացման, մսի և կաթի արտադրության ծավալների ավելացման նպատակով.

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետությունում տավարի հոլշտին ցեղի տոհմաբուծարանի հիմնման ծրագիրը»՝ համաձայն N 1 հավելվածի,
2. «Հայաստանի Հանրապետությունում տավարի կովկասյան գորշ ցեղի տոհմաբուծարանի հիմնման ծրագիրը»՝ (ՀԱԱՀ-ի Բալահովիտի ուսումնափորձնական տնտեսության բազայի վրա) համաձայն N 2 հավելվածի,
3. «Հայաստանի Հանրապետությունում կիսանրբագեղմ կորիդելի  տիպի ոչխարի տոհմաբուծական  տնտեսության  ստեղծման ծրագիրը»՝ համաձայն N 3 հավելվածի,
4. «Հայաստանի Հանրապետությունում կիսանրբագեղմ սուֆֆոլկի տիպի  ոչխարի տոհմաբուծական  տնտեսության  ստեղծման ծրագիրը»՝ համաձայն N 4 հավելվածի:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը՝ վեցամսյա ժամկետում մշակել ծրագրերի իրականացման ժամանակացույցները:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՎԱՐՉԱՊԵՏ՝ Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**